

Աղօթիցս զանազանութիւնը եւ անագան երեւումն ալ նշան են՝ թէ կանխաւ յատուկ պաշտօն մը չկար գառին: Գարծեալ այս աղօթքը չի մերժեր գառին տրուելի ազին օրհնութիւնն ալ: Իսկ մինչեւ ցարդ մեր ըսածները խոտոր կը համեմատին Ուս. Կոնիքիբի կարծեաց հետ, որ նկատելով զառնօրհնէից բացակայութիւնը գրչագրաց մէջ, հապճեպով հետեւցուց՝ թէ անասունս կը մորթուէր առանձնական տներու մէջ, եւ թէ կատարիչն էր ընտանեաց հայրը (Կոն. 113):

Յետ օրհնութեանս կը պատուիրէ Շնորհալին «խորովել» զառնը, տալ քահանային բաժինը, եւ մնացածը ճաշակել (Ընդհ. 160):

Ծ. — Ժամ ձաշակուան: — Ըստ Տարօնացոյն՝ զառնը կ'ուտէին «ի ձաշու» (Թէոփ. 279). եւ ըստ Շնորհալոյն՝ «ի նոր զատկիս առաջօրին». կամ ուրիշ բացատրութեամբ՝ «ի տուրկեան միաշարաթին», յետ մերձենալոյ տէրունական խորհրդոյն (Ընդհ. 155, '57): Երեք շեղագրերդ ալ կը ցուցնեն Պատարագի ժամը: Լատինք եւս մեզ նման կ'ուտէին «յետ սուրբ խորհրդոյն հաղորդելոյ» (անդ, 158): Գառն անոցմէ ընդունուած էր իւր բոլոր համաձայնօր հանդերձ: